



128/2

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՕՂ» փետրվարի 2016 թ.

N 128 շ

ք.Ստեփանակերտ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԵՐԱՀԱՍՑԵԱԿՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ստեփանակերտ քաղաքի Սերգեյ Գորոդեցկի փողոցում և Սերգեյ Գորոդեցկի փակուղում գտնվող անշարժ գույքը վերահասցեավորելու համար 2016 թվականի հունվարի 27-ին գրություն է ներկայացվել «Ստեփանակերտի համայնքային ծառայություն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ա.Մեսրոպյանի կողմից:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 20-ի N381 որոշմամբ հաստատված կարգի 48-րդ և 53-րդ կետերով ու հաշվի առնելով «Ստեփանակերտի համայնքային ծառայություն» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի հունվարի 27-ի N14 գրությունը՝

որոշում եմ.

- 1.Ստեփանակերտ քաղաքի Սերգեյ Գորոդեցկի փողոցում և Սերգեյ Գորոդեցկի փակուղում գտնվող անշարժ գույքը վերահասցեավորել՝ համաձայն հավելվածի:
- 2.Սահմանել, որ անշարժ գույքի հասցեն ենթակա է պետական գրանցման:
- 3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ստեփանակերտի քաղաքապետին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամսվա ընթացքում կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի (վարչական) դատարան՝ երկամսյա ժամկետում:
- 4.Սույն որոշման կատարումը հանձնարարել Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային գույքի կառավարման բաժնին:
- 5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրագրվելու հաջորդող օրվանից:

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ



*[Handwritten signature]*

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ